որը լիազօրուած է շարունակելու հաշտութեան բանակցութիւնները Թիւրքերի հետ։ Կառավարութիւնը հրամայում է ձեզ՝ անմիջապէս հակացողութեան գալ ձեր առջևը գտնուող Թիւրք զինուորական իշխանութիւնների հետ դադարեցնելու համար պատերազմական գործողութիւնները ամբողջ ճակատի վրա՝ սկսած այսօրուայ ժամը 17-ից։ Հեռագրեցէք անմիջապէս ինձ այս հրամանի գործադրութեան ու թշնամութեանց դադարեցման մասին և մի պատճէն էլ ուղարկեցէք ընդհանուր հրամանատարին։ Այս հեռագրից յետոյ անմիջապէս կուղարկեմ ձեզ մի հեռագիր Վեհիբ փաշայի անունով, որը գօր. Նազարբէգեանը պէտք է հաղորդէ ըստ պատկանելոյն անթելի միջոցով և գօր. Գարայեւը մի ներկայացուցչի միջոցով՝ հեռագրաթելով՝ Բաթումից Տրապիզոն»։

Այս հեռագրին յաջորդեց Օդիշելիձէի մէկ ուրիշ հեռագիրը, որը «անյապաղ» պէտք է հաղորդուէր Թիւրք հրամանատարութեան. « Կովկասեան ճակատի թիւրք բանակների ընդհանուր հրամանատար Ֆերիկ Մէհմեդ Վեհիպ փաշային. — Պատիւ ունեմ ծանուցանելու ձերդ գերազանցութեան, որ համաձայն վարչապետ Զիմենկելիի 1918թ. ապր. 10-ին Փոթիի և Բաթումի վրայով ձեզ ուղարկուած և հաւանօրէն արդէն ստացուած հեռագրի, ես հաճոյքն ունեցայ հաղորդելու Անդրկովկասի գործող զօրքերին անդրկովկասեան նոր կառավարութեան հրամանը՝ 10 ապր. ժամը 17-ից սկսած ամբողջ անդրկովկասեան ճակատի վրա դադարեցնել պատերազմական գործողութիւնները՝ համաձայնութեան գալով հանդիպակաց Թիւրք իշխանութիւնների հետ։ Ցոյս ունեմ ձերդ գերազանցութիւն, որ յանուն հաշտութեան յառաջիկայ բանակցութիւնների յաջողութեան և մեր երկու ժողովուրդների ապագայ բարեկամութեան, դուք ևս կը հրամայէք ձեր զօրքերին անմիջապէս դադարեցնել պատերազմական գործողութիւնները»։

Այս բոլոր հրամաններն ու կարգադրութիւնները կատարուեցին կովկասեան բանակի ընդհանուր հրամանատար Լեբեդինսկիից անկախ, Սէյմից և հրաւիրուած նոր նախարարներից դադնի, միայն Զիմենկելիի անձնական պատասխանատուութեամբ։ Ոչ ոք տեղեկութիւններ չունէր Զիմենկելիի արած քայլերի մասին։ Եւ, ինչ որ պակաս տարօրինակ չէ, հեռագրական սովորական կապն էլ հայկական կորպուսի և Հայոց Ազգ. Խորհրդի միջև կտրուած էր, և Թիֆլիսում ոչ ոք չգիտէր, թէ ի՞նչ էր կատարուում հայկական ռազմաճակատում, մինչ այնտեղ զարգանում էին հայ ժողովրդի համար ողբերգական հետևանքներ ունեցող դէպքեր։

Ապրիլ 10-ին հայկական զօրամասերը բռնում էին հետեւեալ ռազմական դիրքերը. Սամաւաթ-Հարամ Վարդան-Բէյոյիւք Թեփէ բարձունքը — Գիւնէյ բարձունքը — Աղբարա բարձունքը — Կանը Բէյոյ գիւղը։ Բերդային հրետանին կազմ ու պատրաստ վիճակի մէջ էր։ Զօրքի ոգին ու բարոյական վիճակը բարձր էր։ Հայկական բանակը պատրաստ էր դիմադրութեան, և հրամանատարութիւնը վստահ էր, թէ Կարսը ցոյց կը տայ յամառ դիմադրութիւն, կը դիմանայ առնուազն երկու շաբաթից մէկ ամիս։ Թիւրքերը աւելորդ զոհեր չտալու համար՝ ստիպուած պիտի լինէին զիջումներ անել Անդրկ. կառավարութեան՝ բերդը առանց կռիւ ստանալու համար։

Այսպէս էր կացութիւնը, երբ իրար յետեւից սկսան հասնել Զիմենկելիի հեռագիրները, որոնք խիստ բարոյալքող տպաւորութիւն արին դիրքերում կանգնած զինուորների վրա։ Քանի որ որոշուած է կնքել զինադադար, էլ